Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 26.04.2021թ. թիվ 2112628572 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<21>> 05 2021թ. 7-13 8359 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Ֆրունզե Խալաթյանի թիվ ՄԴ/41806-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Երկաթուղայինների 5 փողոց 9/1 տան բնակիչ Ֆրունզե Խալաթյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 26.04.2021թ. թիվ 2112628572 որոշումը՝ նշելով, որ իր գործողություններում բացակայել է իրավախախտումը, ինչպես նաև սխալ է նշված դրա արձանագրման վայրը:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը վերանայելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

*<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները:*

*<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ **երթևեկելի մաս է** համարվում ճանապարհի տարր՝ նախատեսված ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթևեկության համար.*

*ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ **կանգառն արգելվում է** խաչմերուկներում, **երթևեկելի մասերի հատման վրա** և հատվող երթևեկելի մասի եզրից 5 մ պակաս վայրում:*

Վիճարկվող որոշմամբ ամրագրված իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ զետեղված տեսանյութի դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը

09.04.2021թ. ժամը 20[37]-ին կանգառ է կատարել Երևան քաղաքի Արթախ-Ռոստովյան-Գ.Նժդեհ փողոցների խաչմերուկի հատվածում՝ երթևեկելի մասերի հատման վրա՝ 20:36:21 վայրկյանից մինչև 20:37:35 վայրկյանը, որի տևողությունն է 74 վայրկյան, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով նախատեսված արարքը նվազ նշանակություն ունեցող գնահատելու համար, ըստ նույն հոդվածի 39-րդ մասի տառացի մեկնաբանության, ոչ թե իրավախախտման փաստն արտացոլող տեսանյութի տևողությունը, այլ վարչական իրավախախտման տևողությունը չպետք է գերազանցի 1 րոպեն, հետևաբար առկա չէ իրավական որևէ հիմք դիմումատուի արարքը նվազ նշանակություն ունեցող գնահատելու համար:

Ինչ վերաբերվում է դիմումատուի պնդմանն՝ իրավախախտման վայրի սխալ նշվելու վերաբերյալ, ապա վարչական տույժ նշանակելու մասին որոշումների մեջ իրավախախտման վայրը նշվում է տեսախցիկի տեղադրման վայրով պայմանավորված և ընդգրկում է տեսախցիկի աշխատայքային փրրույթում գտնվող հատվածը, հետևաբար դա չի նշանակում, որ իրավախախտումը կատարվել է խաչմերուկի տարածքում:

Այսպիսով հիմնավորվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 26.04.2021թ. թիվ 2112628572 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Ֆրունզե Խալաթյանին:

Ե.Կարապետյան

Կատարող Դ.Բալաբանյան
Հեռ.՝ 011 544-783